ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2203-Ա «02» հունիսի 2025թ.

Ն.ՇԵՆԳԱՎԻԹ 11-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ.60/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Օքսանա Շարոյանցի դիմումը՝ Ն.Շենգավիթ 11-րդ փողոցի հ.60/11 հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.07012025-01-0006 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 31.03.2025թ. հ.ԱՏ-31032025-01-0375 տեղեկանքը և «Նեֆրիտ Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից կատարված տեղագրական հանույթը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ Ն.Շենգավիթ 11-րդ փողոցի հ.60/11 հասցեի հողամասի փաստացի մակերեսը կազմում է 1850.0քմ, որը համապատասխանում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.07012025-01-0006 վկայականում ամրագրված հողամասի մակերեսի հետ, սակայն գործող կադաստրային քարտեզում նշված հողամասի մակերեսը կազմում է 1850.80քմ, ինչպես նաև առկա է հողամասի տեղադիրքի շեղում:

Քննարկվող՝ 01-011-0694-0090 կադաստրային ծածկագրով հողամասը Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ գտնվում է արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի տարածքում, ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և գտնվում է ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 8-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության Ն/22105-25 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Ն.Շենգավիթ 11-րդ փողոցի հ.60/11 հասցեում գտնվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 1850.0քմ, որի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Ն.Շենգավիթ 11-րդ

փողոցի հ.60/11 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը /կատեգորիան/ սահմանել արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, իսկ գործառնական նշանակությունը /օգտագործման նպատակը/՝ արդյունաբերական օբյեկտների:

3. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

4. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

6. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ